լինի, գրաւել Սուրմալուն: Հայերն էլ վճռել էին աւելի շուտ մեռնել, բայց տեղի չտալ և երեք օր շարունակ, առանց ընդմիջումի, ամբողջ ճակատի վրա մղում էին արիւնահեղ կռիւներ: Տեղ-տեղ, ինչպէս Դալիգդաշի դիրքերում, որ պաշտպանում էր Կուռո Թարխանեանը, զինուորների ու սպաների յիսուն տոկոսը սպանուեց կամ վիրաւորուեց, բայց չնահանջեց: Սուլթանարաղի դիրքերում թշնամին կուում էր մի քանի հարիւր քայլ հեռաւորութիւնից: Սպայութիւնը՝ գնդ. Խուդաբաշեան, Մամաջանեան, Դալուստեան, Ցովասափեան, Թարվերդեան, Թարխանեան, Մակ-Մալիցկի, Թոփչեան, Աբղարեան, Պետրոսեան, Ղամբարեան և ուրիշներ ցոյց տուին հերոսութեան փայլուն օրինակներ: Առաջ բերենք մի օրինակ միայն: Կուի երկրորդ օրը, Դրօի հրամանով, Քանաքեռից, բեռնատար ինքնաշարժներով, օգնութեան է շտապում Կուռո Թարխանեանը: Մարգարայում պարզուում է, որ խճուղին բռնուած է թշնամու կողմից. առաջ գնալու հնարաւորութիւն չկայ: Առանց երկար մտածելու, Կուռոն դասաւորում է զինուորներին ինքնաշարժերի վրա, ինքը նստում է առաջին ինքնաշարժի վարիչի մօտ և չորս ինքնաշարժները, իրարից յիսուն քայլ հեռու, արագութեամբ քշել է տալիս խճուղիով, միաժամանակ, գնդացիրներից սաստիկ կրակ բանալով ճանապարհի երկու կողմով: Թշնամին յանկարծակիի է գալիս և սարսափահար պահւում առուներում: Տալով ութ զինուոր վիրաւոր և գնդացիրային մասի պետ հերոս Մալիցկիին սպանուած՝ Կուռոն ճեղքում է թշնամու շղթան և հասնում օրհասական դիմադրութիւն ցոյց տուող Դալիգդաշին օգնութեան:

Հոկտ. 26-ին մեր զօրամասերն անցան հակայարձակման: Թշնամին բոլոր կէտերում, կատաղի դիմադրութիւնից յետոյ, բազմաթիւ դիակներ թողնելով, դիմեց խուճապային փախուստի: Ու հետզհետէ հեռացաւ Բարթողեան լեռների միւս կողմը: Երևանը, որ մի քանի օր ապրում էր Սուրմալուից հասնող թնդանօթների որոտի տակ և սարսափահար սպասում էր ճակատամարտի ելքին, հանդիստ շունչ քաշեց: Թշնամին այլևս Սուրմալուի ճակատում կենդանի գործունէութիւն ցոյց չտուեց:

Բոլորովին այլ ընթացք ստացան դէպքերը Կարսի ճակատում: Այստեղ գործում էին զօրավար Ցովսէփեանի բրիգադը — առաջին գունդ՝ գնդ. Մազմանեան, 4րդ գունդ՝ գնդ. Միրիմանեան, 5րդ գունդ՝ գնդ. Շաղուբաղեան. Սեպուհի բրիգադը. 7րդ գունդ՝ գնդ. Իշխանեան, 8րդ գունդ՝ փոխ. գնդ. Բաղդասարեան. Գնդ. Ղորղանեանի ձիաւոր բրիգադը և մի քանի կամաւորական խմբեր՝ Փիլոսի, Մուրատեանի, Սմբատի և այլն: Կարսի ճակատում գործում էին սաւառնակներ և «Աղատամարտ» զրահագնացքը: Կարսի բերդապետն էր՝ զօրավար Փիրումեանը, իսկ բերդի հրետանիի պետն էր բուլգար սպայ՝ գնդ. Բաբաջանովը: Կարսի զօրախմբի ընդհանուր հրամանատարն էր՝ զօրավար Սիլիկեանը, սպայակոյտի պետ՝ գնդ. Վեքիլեանը: Թէ բերդի և թէ դաշտային մասերը թոյլ էին կազմակերպուած. զինուորների մեծ մասը նոր էր հաւաքուած և չէր մերուած գնդերում: Սպաների և զինուորների փոխյարաբերութիւնը շատ մասերում մտերմական չէր: Լաւ չէին և